ՏԵՂԵԿԱՆՔ

«ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով կարգավորվում են պետական մարմնում, ինչպես նաև ենթակա պետական մարմնում կառավարչական իրավահարաբերությունները, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին պետական մարմնի, ինչպես նաև ենթակա պետական մարմնի մասնակցության հիմնական պայմանները:

2. Ազգային ժողովում, Սահմանադրական դատարանում, Բարձրագույն դատական խորհրդում, Հաշվեքննիչ պալատում, Հեռուստատեսության և ռադիոյի պետական հանձնաժողովում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովում, Հակակոռուպցիոն կոմիտեում կառավարչական իրավահարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ: Մարդու իրավունքների պաշտպանի՝ կառավարչական իրավահարաբերությունների մասնակցությունը կարգավորվում է սույն օրենքով, եթե «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքով առանձնահատկություններ սահմանված չեն:

Հոդված 9. Պետական մարմնի, ենթակա պետական մարմնի կառավարման լիազորությունները

1. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանադրական մարմինները կամ պաշտոնատար անձը՝

1) հաստատում է պետական մարմնի, ենթակա պետական մարմնի, ինչպես նաև գրասենյակի կանոնադրությունը և կատարում կանոնադրության փոփոխություններ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

2) հաստատում է պետական մարմնի, ենթակա պետական մարմնի, ինչպես նաև գրասենյակի կառուցվածքը և սահմանված կարգով կատարում կառուցվածքային փոփոխություններ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

3) օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված գործունեության ոլորտին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ սահմանում է պետական մարմնի և ենթակա պետական մարմնի գործունեության հիմնական ուղղությունները.

4) իրականացնում է պետական մարմնի և ենթակա պետական մարմնի գործունեության վերահսկողությունը.

5) լսում է պետական մարմնի և ենթակա պետական մարմնի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է գործունեության ստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում պետական մարմնին և ենթակա պետական մարմնին ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

7) հաստատում է տարեկան հաշվեկշիռը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությունները համապատասխանաբար իրականացնում են՝

1) Հանրապետության նախագահը՝ իր աշխատակազմի համար.

2) վարչապետը՝ Կառավարության ենթակա պետական մարմինների և մարզպետների աշխատակազմերի, վարչապետին ենթակա պետական մարմինների և իր աշխատակազմի համար.

3) Ազգային ժողովի նախագահը՝ Ազգային ժողովի աշխատակազմի համար, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

4) Սահմանադրական դատարանի նախագահը՝ Սահմանադրական դատարանի աշխատակազմի համար, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

5) նախարարը՝ նախարարության ենթակա պետական մարմինների համար.

6) Մարդու իրավունքների պաշտպանը՝ իր աշխատակազմի համար.

7) Բարձրագույն դատական խորհուրդը՝ դատական դեպարտամենտի համար.

8) գլխավոր դատախազը՝ դատախազության համար.

9) քննչական կոմիտեի նախագահը՝ քննչական կոմիտեի համար.

10) հատուկ քննչական ծառայության պետը՝ հատուկ քննչական ծառայության համար.

11) Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի համար:

3. Նախարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված լիազորություններն իրականացնում է վարչապետը, իսկ սույն հոդվածի 1-ին մասի[ուղղ.] 3-րդ, 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված լիազորությունները՝ նախարարը:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորություններն իրականացնում են ինքնավար և անկախ պետական մարմինները:

5. Պետական մարմին, ենթակա պետական մարմին հանձնվող գույքի կազմը և չափը որոշում է Կառավարությունը: Կառավարությունը որոշում է նաև հանձնվող գույքի օգտագործման և տիրապետման կարգը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

(9-րդ հոդվածը փոփ. 14.11.19 ՀՕ-253-Ս)